«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<u>ԹԵՄԱ</u>՝ Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպումը, մեթոդները և գրական ունկնդրման դասերն 1-ին դասարանում

<u>ԱՌԱՐԿԱ</u>՝ Մայրենի

<u>ՀԵՂԻՆԱԿ</u>՝ Հասմիկ Սուրենի Գրիգորյան

<u>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ</u>՝ Վարսերի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Տարրական դասարաններում ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները
3. Ինքնուրույն ընթերցանության հիմնական ձևերը
4. Ընթերցողական ունակությունների ձևավորման փուլերը 1-ից 4-րդ դասարաններում
5. Ինքնուրույն ընթերցանությունը՝ կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց
6. Քննադատական մտածողության զարգացումը գրական ունկնդրման դասաժամերին
7. Ուսուցողական ամփոփիչ խաղերի կիրառումը ընթերցանության ժամերին
8. Եզրահանգում՝ ինչպես օգտագործել <<Ինքնուրույն ընթերցանության նյութեր>> ժողովածուն
9. Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ինչպե՞ս ձևավորել հետաքրքրություն ընթերցանության հանդեպ>> հարցը հուզում է շատ – շատերին: Տեղեկատվության զարգացման ժամանակակից ձևերը նվազեցրել են սովորողների հետաքրքրությունը գրքի նկատմամբ: Ներկայումս երեքից երկուսը ակտիվ ընթերցողներ չեն: Մինչդեռ ընթերցանության կարողությունը ոչ միայն սովորելու, այլև մտածելու գործիք է:

Ընթերցողի կարողությունները ձևավորվում են աստիճանաբար: Միաժամանակ դրանք բնութագրվում են իբրև աշակերտների՝ գեղարվեստական երկի բովանդակության մեջ խորամուխ լինելու ունակություններ և չեն կարող առանձնացվել խոսքային կարողություններից ու դիտարկվել անկախ: Բանն այն է, որ ներքին և արտաքին խոսքին անընդհատ ուղեկցվում է մտային բոլոր այն գործողություններով, որոնք վերաբերում են ընթերցողական կարողություններին:

Երբեմն երեխան դժվարանում է խնդիր լուծել, որովհետև չի կարողանում այն ճիշտ կարդալ: Գրագետ խոսքի ընկալումն ու կառուցումը նույնպես կապված են կարդալու կարողության հետ: Այն կատարելության պետք է հասցնել դեռևս տարական դասարաններում: Երեխաների մեջ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու իմաստով անփոխարինելի է ուսուցչի և ծնողի դերը, քանի որ ընթերցումն իրականացվում է թե տանը, թե դպրոցում: Կարևոր է, որ ակտիվ ընթերցանությունը դառնա բնավորության գիծ:

Հարկավոր է հետևել, որ երեխաների կողմից ընթերցվող գրքերը լինեն բազմաբնույթ թեմաներով: Փոքրիկների համար ընթերցվող մանկական գրքերը հիմնականում նկարազարդ են և երեխան նկարազարդումների միջոցով և մեծերի օգնությամբ կարողանում է բացահայտել դրանց իմաստը, այնուհետև ցանկություն է առաջանում լսել և իմանալ բուն տեքստը: Մատչելի ընտրված գիրքը երեխայի մեջ նորանոր հետաքրքրություններ է առաջացնում և հարգալից վերաբերմունք ձևավորում գրքի ու ընթերցանության հանդեպ:

Ընթերցելու ժամանակ անհրաժեշտ է ձայնի տպավորիչ երենգով հաղորդել հերոսի ապրումների յուրահատուկ կողմերն ու արտահայտչական միջոցների

առանձնահատկությունները: Երեխան կարդացողի դեմքի արտահայտությունից և արտասանության հնչերանգից գուշակում է հերոսի ձգտումներն ու նպատակները:

Պետք է հասնել այն բանին, որ երեխաները աստիճանաբար հմտանան ինքնուրույն կարդալու մեջ: Նախ անհրաժեշտ է գրքի բովանդակության շուրջ հարց տալու լսածի բովանդակությունը երեխայի կողմից վերապատմելու միջոցով խթանել ընթերցողի հետաքրքրությունը:

Ինքնուրույն ընթերցանության համար հաճույք ուրախություն և հետաքրքրություն առաջացնող գրքերի ընտրությունը նույնպես շատ կարևոր է:

Եթե ընթերցանությունը երեխայի համար տպավորիչ լինի և հրապուրիչ լինի, ինչպես խաղը, ապա նա սիրով և հաճույքով կկարդա և կընկալի կարդացածի բովանդակությունը: Կարևոր է նաև, որ ընտրված գիրքը համապատասխանի սկսնակ ընթերցողի հակումներին և տարիքային առանձանհատկություններին, որոնք պետք է հաշվի առնել ինքնուրույն ընթերցանության ունակությունները զարգացնելու համար:

Անհրաժոշտ է համբերատարությամբ և մշտապես երեխայից պահանջել, որ հիշի կարդացած գրքի վերնագիրը, հեղինակի անուն ազգանունը:

Երեխան պետք է կարդա ուշադիր, առանց շտապելու, պետք է հետևել, որ երեխան կարդա գիտակցված, հասկանալով, արտահայտիչ, ճիշտ և սահուն, որպեսզի զարգանան նրա ընթերցողական կարողությունները:

Դպրոցն ու ընտանիքը պետք է արդյունավետ ու նպատակային ձևով կազմակերպեն երեխաների ընթերցանությունը, քանզի ում հասանելի չէ ընթերցանության արվեստը, նա աղքատիկ և բարոյապես՝ թույլ:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կրտսեր դպրոցականի ինքնուրույն ընթերցանության նպատակը գրքի, ընթերցանության նկատմամբ կայուն հետաքրքրության արթնացումն է և այդ ճանապարհով նրանց մեջ անձնային դրական որակների ձևավորումը:

Եթե աշխատանքը ճիշտ է պլանավորված և կազմակերպված, ապա կրտսեր դպրոցականները ինքնուրույն ընթերցանությամբ զբաղվում են թե դասարանում՝ դասի ժամանակ, թե դասից դուրս՝ տանը: Մեթոդապես ճիշտ է և համակարգված ընթերցանության կազմակերպումը նպաստում է կրթադաստիարակչական մի շարք խնդիրների լուծմանը: Հասկանալով կարդալ, տիրապետել ընթերցանության արտահայտաչամիջոցներին, գրքով աշխատել, այն դիտելով որպես գիտելիքների, բարոյական և գեղագիտական ինքնադաստիարակման, սովորելու կարողությունների մշակման հիմնական աղբյուր:

Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժության ճիշտ և նպատակային կազմակերպում: Այնտեղ, որտեղ կրտսեր դպրոցականների նպատակային և պլանավորված ինքնուրույն ընթերցանությունն իրականացվում է հանձնարարականով և վերահսկմամբ (ո՞վ է սիրում կարդալ, ո՞վ չի սիրում) աշխատանքը դառնում է տարերային, հաջողությունները՝ մասնակի:

Գրքի նյկատմամբ հետաքրքրությունն ու սերը պահպանվում և զարգանում են, եթե առկա են որոշակի պայմաններ.

1. Այն գիրքը, որի նկատմամբ մենք կամենում ենք երեխաների մեջ սեր և հետաքրքրություն արթնացնել, նրանց ձեռքին պիտի լինի մշտապես: Երեխան պիտի շրջապատված լինի գրքերով: Որքան ձևավորումը գրավիչ ու բազմազան լինի, այնքան մեծ կլինի երեխայի հետաքրքրությունը:
2. Յուրաքանչյուր դասի ընթացքում գրքի հետ տարվող աշխատանքի բովանդակությունը խստորեն պիտի համապատասխանի երեխաների կարդալու կարողություններին, գիտելիքների փաստացի մակարդակի և ճանաչողական հետաքրքրություններին:
3. Ինքնուրույն աշխատանքը գրքով պետք է կազմակերպել այնպես, որ բավարարի ամեն մի երեխայի հետաքրքրությունը:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Տարրական դասարաններում ինքնուրույն ընթերցանության գլխավոր կազմակերպիչը դասվարն է, իսկ ինքնուրույն կազմակերպման ձևերը բազմաբնույթ են.

- ինքնուրույն ընթերցանության դասեր,
- սովորողների զանգվածային ինքնուրույն գործունեություն՝ կապված ընթերցանության հետ (գրական ցերեկույթների, վիկտորինաների նախապատրաստում, գրքերի ցուցահանդեսներ, դասարանային գրադարանի ստեղծում),
- սովորողների ընթերցանության ուղղությամբ քարոզչություն ընտանիքներում,
- օգնություն՝ երեխաների անձնական գրադարանների ստեղծման գործում:

Ինքնուրույն ընթերցանության դասերը առանձնացվում են ընթերցանության ժամերից և արտացոլվում են դասամատյանում: Մշտապես իրականացվող ինքնուրույն ընթերցանությունը, ապահովելով կրտսեր դպրոցականների վրա մանկավարժական ազդեցության պարբերականությունը, սովորողներին նախապատրաստում է մանկական գրքերի ինքնուրույն ընտրությանը:

Յուրաքանչյուր երեխայի համար ստեղծվում են ընթերցողական փորձի և ճաշակի զարգացման, կարդացածի օգտակարության և արդյունավերության գիտակցման պայմաններ:

Ինքնուրույն ընթերցանության պարապմունքից պարապմունք ընկած ժամանակահատվածում ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է <<ընթերցանության անկյան>> վրա: Այն ձևավորվում է անմիջապես առաջին պարապմունքից և գործում է ուսուցման մյուս տարիների ընթացքում: Ինքնուրույն ընթերցանության հետ կապված միջոցառումները (ցերեկույթներ, հանդեսներ, վիկտորինաներ, գրքերի ցուցահանդեսներ) կազմակերպում են ոչ ավելի, քան կիսամյակը 1-2 անգամ: Այստեղ կարևորն այն է, որ անհրաժեշտ նյութի ընտրությունը համապատասխանի սովորողների որոշակի ժամանակահատվածում ինքնուրույն ընթերցած գրքի բովանդակությանը:

Աշխատանքը ճիշտ կազմակերպելու դեպքում սովորաբար ցերեկույթին մասնակցում է ամբողջ դասարանը: Սա ցերեկույթի հաջողության կարևորագույն գրավականն է: Ինքնուրույն ընթերցանության հետ կապված միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը չի կարելի դիտել որպես զվարճալի միջոցառում: Ընդհակառակը՝ այդ աշխատանքն արթնացնում է հետաքրքրություն գրքի նկատմամբ, զարգացնում է երեխաների երևակայությունը, հիշողությունը, խոսքը, ճաշակը, դաստիարակում բարոյականային արժեքավոր որակներ:

Այս դիրքորոշմամբ էլ պետք է մոտենալ դասարանային գրադարանի, անձնական գրադարանի ձևավորման աշխատանքներին, ծնողների օգնությամբ դասաարնում ստեղծվում է գրքերի անկյուն: Դասամիջոցներին երեխաները մոտենում են, թերթում գրքերը, դիտում նկարները: Դեռևս 1-ին դասարանի 1-ին կիսամյակից պետք է ստեղծել դասարանային գրադարան և այդ նպատակով մշտական կապ պահպանել դպրոցի մգրադարանավարուհու հետ:

Կարևոր է նաև մանկական անձնական գրադարանի ստեղծումը, որը փևավորում է փոքրիկ ընթերցողի ճաշակը և հետաքրքրությունը:

ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ Ի-IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ինքնուրույն ընթերցողական ունակությունների ձևավորումը սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում աստիճանաբար՝ փուլ առ փուլ.

Ի փուլ՝ (նախապատրաստական) Ի դասարանի Ի կիսամյակ – երբ աշակերտները դեռևս նոր են գրաճանաչ դառնում:

Ի Ի փուլ՝ (տարրական կամ նախնական) Ի դասարանի Ի Ի կիսամյակ:

Ի Ի Ի փուլ՝ (հիմնական) Ի Ի, Ի Ի Ի , IV դասարաններ:

Երեք փուլերի համար էլ կարևոր խնդիրներ են երեխաների ընթերցողական մտահորիզոնի ընդլայնումը և յուրաքանչյուր երեխայի ընթերցողական փորձի կատարելագործումը:

Նախապատրաստական փուլը անհրաժեշտ է 1-ին դասարանցիների մեջ արթնացնել գրքի նկատմամբ հետաքրքրություն, ամեն օր յուրաքանչյուր ազատ ժամ գրքով զբաղվելու ձգտում:

Այս փուլում աշխատանքը կազմակերպելու համար այս ուսումնական տարում օգտվել ենք <<Կրտսեր դպրոցականի գրադարան>>-ից <<Գրական ունկնդրում և խոսք>> 1-ին դասարանի ձեռնարկի հրաշալի նյութերը: Պարբերաբար, շաբաթական մեկ անգամ, որոշակի օր և ժամ, բեռնաթափամն օրերին ունկնդրում են ծավալով ոչ մեծ հեքիաթներ և պատմվածքներ, որ ընթերցում է ուսուցիչը: Երեխաները ունկնդրում են հեքիաթում տեղի ունեցող դեպքերը, առանձնացնում էականը, մանրամասները, ծանոթանում հերոսներին, հիշում ոչ միայն նրանց անունները, այլև վայրը, գործողությունները: Սովորաբար ընթերցվող հեքիաթներնընտրում են ոչ թե գրողների հատորյակներից, այլ հատուկ երեխաների համար հրապարակված առանձին գրվածքներից: Երեխաները թերթում են գիրքը, դիտում կազմը, նկարազարդումները: Ուսուցիչը ուշադրություն է դարձնում կազմի վրա գրված հեղինակի ազգանվանըև ստեղծագործության վերնագրին: Ուսուցչի ընթերցումից հետո, երեխաները կրկնում են նկարազարդումների տակ գրված տողերը, մտապահում ընթերցածը:

1-ին դասարանի 2-րդ կիսամյակում սկսվում է ինքնուրույն ընթերցանության նախնական փուլը: Այս փուլում աշակերտները սովորում են առանց ուրիշի օգնությամբ կարդալ անծանոթ գիրքը, գտնել վերնագիրը, հեղինակի անունը, դիտել նկարազարդումները և դրանց հիման վրա որոշել թեման: Հարկ է սովորեցնել, ընթերցելիս չշեղվել, հիշել կարդացածի բովանդակությունը ու պատմել այն, պատկերացնել իրադարձությունը և հերոսներին, պատմելիս ցուցադրել համապատասխան նկարազարդումները: Զուգահեռաբար աշակերտները պիտի սովորեն գրառել կարդացած գրքի վերնագիրը: Այդ նպատակով ուսուցիչը երեխաներին խորհուրդ է տալիս առանձնացնել հատուկ տեղերը և գրի առնել կարդացած գրքի հեղինակի անունը, ազգանունը և գրքի վերնագիրը: Փոքրիկները սիրով կատարում են նաև տրվող հեքիաթի բովանդակությանը վերաբերող փոքրիկ նկարազարդումներ: Այդ աշխատանքը սկսվում է հենց տետրի շապիկի նկարազարդումից:

Այս խնդիրները հաջողությամբ լուծելու համար հարկավոր է հաշվի նստել 1-ին դասարանցիների, որպես ինքնուրույն ընթերցողների տարիքային, մտավոր, հոգեբանական առանձնահատկությունների հետ: Իրենց ուժերին անվստահ կամ վատ կարդացող երեխաների համար ինքնուրույն ընթերցանությունը բարդ և ծայրահեղ լարված գործընթաց է, այն նպատակին և արդյունավետ կընթանա միայն աշխատանքը հատկապես մանկավարժորեն և մեթոդապես ճիշտ կազմակերպելու պայմաններում:

Ի վերջո երեխան գրքի հետ մնում է մեն-մենակ: Նրա հնարավորությունների սահմաններով կանխորոշվում ուսուցողական և ծնողական բարեհամբյուր, համբերատար , նպատակասլաց աշխատանքով է միայն երեխան հաղթահարելու ծագող դժվարությունները:

Ուսուցման 1-ին տարում ինքնուրույն ընթերցանությունը պարտադիր է միայն ինքնուրույն ընթերցանության ժամին՝ գրական ունկնդրում և խոսք: Թեև ինքնուրույն ընթերցանությունը կազմակերպվում է միևնույն ժամին և նույն գրքի շուրջ, առանձին աշակերտների կարող են հանձնարարվել տարբեր առաջադրանքներ:

Ինքնուրույն ընթերցանության հիմնական խնդիրները լուծվում են 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում:

2-րդ դասարանում աստիճանաբար բարդանում են ընթերցանության խնդիրները: Աշակերտները արդեն սովորում են կարդալ ոչ միայն ուսուցչի հանձնարարածը, այլև ինքնուրույն ընթերցել գրքեր, ամսագրեր և կարդալ՝ ըստ իրենց նախասիրությունների: Աշակերտները միաժամանակ պետք է սովորեն պահպանել և ընթերցելով յուրացնել դասարանային գրադարանի գրքերը: Աստիճանաբար պետք է հարստացնել ինչպես դասարանային, այնպես էլ անձնական գրադանանը, քանի որ 3-րդ և 4-րդ դասարանում երեխաները ավելի տարիքով են, փորձ ունեն, ուստի բարդանում են նաև առաջադրանքները:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Կարդալու կարողությունների զարգացման լավագույն միջոց է ինքնուրույն ընթերցանությունը, լավ կարդալու համար պետք է շատ կարդալ: Արտադասարանային ընթերցանության դերը մեր օրերում արդիական հնչեղություն ունի, քանի որ մատաղ սերունդը համակարգիչը գերադասում է գրքից: Երեխաներին գրիչին կապելու աշխատանքը պետք է կազմակերպել ինքնուրույն ընթերցանության ճիշտ և արդյունավետ դրվածքով: Ի՞նչ զորություն պետք է ունենա երեխաներին գրքին կապելու գործընթացը, որ դիմադրի համակարգչին, բազմաթիվ տեսասարքերին, դառնա անկրկնելի և գրավիչ: Անհրաժեշտ է, որ երեխան հայտնվի գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին: Կարդացած նյութը լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային, որ գիրքը դառնա երեխայի <<լավագույն ուղեկիցն ու բարեկամը>>:

Ինքնուրույն ընթերցանության արդյունավետ կազմակերպումը կարող է իրականացնել ուսումնական նպատակներ, լուծել կրթական և դաստիարակչական խնդիրներ.

1. Կձևավորվեն կարդալու կարողություններ, կապահովվի դրանց հետագա զարգացման անընդհատությունը:
2. Հայոց լեզվի գործնական ուսուցումը կիրականացվումի (ճիշտ ընտրված նյութը սովորեցնում է նոր բառեր ու արտահայտություններ):
3. Կհարաստանան երեխաների աշխատհաճանաչողական գիտելիքները:
4. Կիրագործվի երեխաների համակոզմանի դաստիարակությունը (ընկերասիրություն, աշխատասիրություն, հոգատարություն, կենսուրախություն, լավատեսություն՝ տպավորիչ օրինակների պատկերավոր ու գեղեցիկ խոսքի միջոցով):

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս որպես հնար կարելի է օգտագործել բարձրափայն կարդալը (երեխաների համար զվարճալի կարող է լինել, երբ նրանց առաջարկվի ձայնագրել սեփական խոսքը, լսելու և գնահատելու այն):

Կարևոր է նաև հասկանալով կարդալը, երբ նա կարդում է բազմաբնույթ նյութեր՝ մեկը մեկից հետաքրքիր, զարամնալի: Կարդում է հաճույքով, առանց հարկադրանքի, ուզում է իմանալ պատճառահետևանքային կապերը, ուրախանում է գտածով, ձգտում է լուծել, գտնել պատասխանը: Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց: Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը՝ պայման: Զարագացնելով կարդալու կարողությունը՝ երեխան աստիճանաբար սովորում և վարժվում է շշուկով կարդալ և ընկալել կարդացածը:

Զևավորելով և զարգացնելով կարդալու կարողությունները՝ ինքնուրույն ընթերցանությունը կատարում է նաև այլ գործառույթներ.

1. Խոսքի զարգացում: Գիրք կարդալը <<բացում է երեխայի լեզուն>>, նա ավելի համարձակ է դառնում իր մտքերն արտահայտելիս, կարողանում է եզրակացություններ անել, դառնում ինքնուրույն և ինքնավստահ:
2. Երևակայության զարգացում: Գիրքը հուզական բարենպաստ միջավայր է ստեղծում երեխայի համար: Դրական անձանց, մարդկային կերպարով բույսերի, կենդանիների դերերը նպաստում են երեխաների երևակայության զարգացմանը, ընթերցելը դառնում է հետաքրքիր և զվարթ:
3. Մտածողություն, ուշադրություն, հիշողություն, զարգացում: Ընթերցելիս երեխան համեմատում է համադրում և մասնավորեցնում: Արտադասարանային ընթերցանության նյութերը պետք է լինեն՝ բովանդակությամբ մատչելի և հետաքրքիր, տարիքային առանձնահատկությունների տեսանկյունից՝ ծավալով ոչ շատ մեծ, դինամիկ սյուժեով: Ցանկալի է, որ դրանք վերաբերեն հայրենի երկրին, բնությանը, ճանապարհորդություններին, երեխաների կյանքին, լինեն հումորոյին պատմություններ:

Ուսումնական գործունեության պլանավորումը կարդացածի վերլուծության տեսանկյունից.

- Ճշտել տեքստի սեփական ընկալումը:
- Նկարելով կամ բանավոր խոսքով կազմել տեքստի պլան:
- <<Դուր է գալիս, դուր չի գալիս >> դատողությունների հիմնավորում:
- Երկխոսություն կարդացածի հերոսների և դեպքերի մասին:
- Երևակայության միջոցով նոր լուծումներ գտնելը:
- Վերարտադրել կարդացածը հարցերի օգնությամբ:

- Պատմել ըստ հիշողության:
- Նկարել կարդացածի թեմայով:
- Բեմականացնել՝ մասնակցելով հագուստի ընտրությանը:
- Հիշատակել համապատասխան մաղթանքներ, առած – ասացվածքներ:
- Կարևորել և կիրառել ոչ խոսքային միջոցներ (մնջախաղ):
- Սեփական կենսափորձից բերել նման օրինակներ:

Ներկայացնենք ինքնուրույն ընթերցանության կազմակերպման փորձի օրինակներ: Ցանկալի է դասն անցկացնել ԽԻԿ համակարգով:Խթանման փուլը նպատակահարման է սկսել վերնագրից, որը ընթերցվող ստեղծագործության այցետոմսն է: Ուսուցիչը մտագրոհի կամ << զույգերով>> մեթոդով քննարկում է հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է արտահայտում վերնագիրը:
- Կարո՞ղ եք միայն վերնագրի միջոցով կռահել, թե ինչի մասին է լինելու պատմությունը: Ինչու՞:
- Ի՞նչ է պատմում վերնագիրը նյութի մասին:
- Փորձի՛ր կռահել, թե ինչի մասին է այս պատմությունը:

Այս նախաբանից հետո, ամենայն հավանականությամբ հանձնարարվող նյութը կարդալու ցանկությունն արդեն առկա է:

Իմաստի ընկալման փուլում աշակերտը կարդում է նյութը: Առաջարկվում է, օրինակ , այն կարդալ <<փոխգործուն գրառումների համակարգ>> մեթոդով:Կրտսեր դպրոցում գերադասելի է օգտագործել երկուսից որ ավելի նիշ՝ <<+>>՝ <<Ես սա գիտեմ>>, <<->>՝ <<Ես սա չգիտեմ>>: Այս մեթոդի կիրառումը կարդալու ընթացքում կօգնի աշակերտներին վերահսկել սեփական ընկալումը: Արդյունավետ է՝ կարդալիս կիրառել <<Երկուակի գրառումների օրագիր>> մեթոդը, ըստ որի էջի մի կողմում նշում են իրենց կարծիքով ամենակարևորը, մյուս կողմում՝ մեկնաբանում, թե ինչու և ինչով է կարևոր: Կարելի է օգտագործել <<Հետազոտության ուղենիշներ>> մեթոդը: Օրինակ՝ <<Գտնել այն տողերը, որոնք արտահայտում են հերոսներից մեկի երաժշտագետ լինելու շնորհը>>:

Կշռադատման փուլում աշակերտները հետադարձ հայացք են գցում կատարվածին, տալիս հարցեր, կատարում մեկնաբանություններ, բանավիճում են: Այս փուլում կարելի է

կիրառել <<Ընթերցողից պատասխան ակնկալող հարցերի >> մեթոդը կամ <<Ընդհանուր հարցման քննարկում>> մեթոդը:

- Ի՞նչ նկատեցիք այս առակում, ինչի՞ մասին այն ստիպեց մտածել
- Ո՞րն է ամենակարևոր ասելիքը:
- Ո՞րն է ամենակարևոր նախադասությունը:
- Ո՞րն էր, ձեր կարծիքով, ամենակարևոր բառը:

Աշակերտներին հանձնարարվում է մտածել և քննարկել նախապես պատրաստված մեկնաբանող հարցերը:

Վերջում ամփոփել նյութը՝ տալով ստեղծագործական փոքրիկ գրավոր շարադրանք, անցկացնել հարցազրույց, բեմականացում և այլն:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողության է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննելու, բանավիճելու չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատորեն մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ լիովին համոզվել ենք, որ մեր փոքրահասակ սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնասիրության ակտիվ դերակատարները, համագործակցել դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ:

Արտադասարանային ընթերցանություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել արդի դարաշրջանում մշտապես հնչող հետևյալ կարևոր պահանջը. Կրտսեր դպրոցականների մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ անելու կարողություններ:

Իսկ ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով, ի՞նչ հնարներով ձևավորենք դպրոցականների մեջ սեր և ընթերցանության նկատմամբ այնպիսի վերաբերմունք, ոնպաստի նրանց մեջ անձնային բարձրարժեք որոկների զարգացմանը, գրագետ ընթերցողի կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք նոր են կարդացել ու շատ քիչ բան են հասկացել: Այդ ինչպես աշակերտը կարող է կարդալ ու չհասկանալ կարդացածը: Ինչպե՞ս կարող ենք բարելավել նրանց ընթերցողական ընկալունակությունը: Ինչու՞ է երեխան կարդում և չի կարողանում ընկալել իր իսկ կարդացածը:

Վատ ընկալունակությունը հաճախ բացատրվում է շատ պարզ պատճառով՝ վատ ընկալողները, պարզապես, ուշադիր չեն կարդում, նրանք չգիտեն ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Մենք՝ ուսուցիչներս, կարող ենք օգնել մեր աշակերտներին՝ խորհել կարդացածի մասին: Ընթերցողը պետք է գիտակցաբար ջանքեր գործադրի կարդացածը հասկանալու համար:

Ինքնուրույն ընթերցանության դասերին քննադատական ընթերցանության զարգացմանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառումը օգնում է, որ ընթերցողը գիտակցի և օգտագործի բնագրի առանձնահատկությունները, որոնք կօգնեն հասկանալ բնագրի իմաստը, վերահսկի իր ընկալման ընթացքը և հասկանա, թե որտեղ էր կարդացածն իմաստալից, իսկ որ մասում այն չհասկացվեց:

Մինչև պատմվածքի ընթերցումը հիշեցնում ենք, որ ընթերցելուց հետո համագործակցային խմբերը պիտի քննարկեն: Այսինքն, եթե ընթերցողն իր առջև որոշակի նպատակ է դնում նախքան կարդալը, նա ընթերցման ժամանակ վերահսկում է իր սեփական ընկալումը: Երբ գիտակցում է, որ ինչ-ինչ իրադարձությունների իմաստը լավ չհասկացավ, նա վերընթերցում է, չհասկացած հատվածը արագ վերանում է:

Ընթերցումից հետո երեխաներին ուղղվում են հարցեր, որոնք քննարկվելու են .

- ✓ Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում:
- ✓ Ի՞նչը դուր չեկավ:
- ✓ Ինչպե՞ս էր գիրքն սկսվում:
- ✓ Ինչպե՞ս ավարտվեց:
- ✓ Ի՞նչն էր կարևոր:

- ✓ Ի՞նչ սովորեցիք հերոսներից:
- ✓ Ո՞ր կերպարը շատ դուր եկավ ձեզ:
- ✓ Ի՞նչ հասկացաք կարդալով գիրքը:
- ✓ Կարող եք այլ ավարտ հորինել:
- ✓ Ինչպիսին էր տրամադրությունը:
- ✓ Որն էր ձեր սիրելի հատվածը:

Խմբի անդամների միջև կատարում ենք աշխատանքի բաժանում՝ ընտրելով խորագրեր:

- Պատմվածքի քարտեզը
- Հեղինակի մասին
- Պատմվածքի <<մանրակերտը >>
- Մեր տպավորությունը
- Գլխավոր հերոսի բնութագիրը
_ Նամակ հերոսին
- Պատմվածքի որևէ հատվածի նկարազարդում

Վերջում խմբերը ներկայացնում են Կատարած աշխատանքները:

Ինքնուրույն ընթերցանության նման ձևերով կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որ աշակերտները կարդան սիրով, գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան իրենք ձեռք բերել գիտելիքներ:

Նպաստել երեխաների քննադատական մտածողության զարգացմանը, նրա տարիքին համապատասխան՝ նշանակում է ուրախ, հրապուրիչ դարձնել և հույզերով հագեցնել նրա մանկությունը:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻՆ

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները դեռ խաղի մեծ պահանջմունք ունեն: Խաղը երեխաների մտավոր ակտիվության դաստիարակման արժեքավոր միջոց է: Այն երեխաների մեջ կենդանի հետաքրքրություն է առաջացնում, զարգացնում է ճանաչողությունը՝ օգնելով յուրացնել ցանկացած նյութ:

Ուսումնական գործընթացում խաղային տեխնոլոգիաների համակցումը և ուսուցումը մեծ մասամբ պայմանավորված է նրանով, թե ուսուցիչն ինչպես է հասկանում խաղերի գործառույթները:

Մանկավարժական գործընթացի համար հատկանշական են խաղերի հետևյալ խմբերը.

1. ուսուցողական, վարժեցնող, զարգացնող
2. վերարտադրողական, ստեղծագործական
3. հաղորդակցական, մասնագիտական – կողմնորոշիչ

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին բնորոշ է անմիջական ընկալումն ու արտահայտչականությունը: Նրանք ազատորեն ներգրավվում են ցանկացած գործունեության, հատկապես խաղի մեջ, իրենք են կազմակերպում ինքնուրույն խաղեր:

Այսօր մեր փոքրիկներին գրավում են օտար, երբեմն անհասկանալի մուլտֆիլմերը, տարատեսակ համակարգչային խաղերը:Նույնիսկ բակային խաղերն են փոխվել: Երբեմն <<Տուն - տունիկը>> այսօր փոխել է իր նկարագիրը: Խաղի կերպարները դարձել են սարսափազդու, իսկ հերոսները՝ հանցագործներ: Ներկա սերունդը հեռանում է ազգային արժեքներից, որի տեղը բարոյական գործում անգնահատելի է և անփախարինելի:

Ժողովրդական հեքիաթները, առակները, էպոսը, առասպելները, առածներն ու ասացվածքները միշտ էլ հոգեհարազատ են եղել բոլոր տարիքային խմբերին: Դպրոցական գործող դասագրքերում (Մայրենի 1, 2, 3, 4) ընդգրկված քանակության ժամերի նմուշներ, որոնց շնորհիվ սովորողները ծանոթանում են ժողովրդի երբեմնի կենցաղին, սովորույթներին, ազգային առանձնահատկություններին: Ինքնուրույն ընթերցանության ժամին ընթերցվում են բազամպիսի հեքիաթներ, որոնց թեմատիկ ամփոփումը կարելի է ուղեկցել խաղով:

Որպես ուսուցողական խաղի ամփոփիչ օրինակ ներկայացնենք <<Հրաշքների դաշտը>>, որը կառուցում ենք հեռուստատեսային համանուն խաղի հիմքով:

Պատրաստվում է թմբուկը՝ A_1 չափի 2 թղթեր սոսնձով միացվում են, գծվում է մեծ տրամագծով շրջան և տարբեր բաժինների: Մրցանակի բաժնում՝ **<<Մ>>** կարմիր տառը: Եթե սլաքը կանգնում է այդ բաժնում, խաղացողը վերցնում է մրցանակը կամ շարունակում է խաղը: Իսկ ճիշտ գուշակելով հարցերը կարող է վաստակել մինչև 750 միավոր:

Եթե նրան բաժին է ընկնում **<<Սնանկ>>-**ը, ապա հավաքած բոլոր միավորները վերանում են և խաղի իրավունք ստանում է հաջորդ մասնակիցը: **<<Սնանկ>>-**ը գրվում է սև տառով:

<<Քայլի փոխանցումը>> նշվում է **<<O>>-**ով: Թմբուկի վրա **<<+>>** նշանը ցույց է տալիս, որ խաղացողը իր հայեցողությամբ կարող է բացել ցանկացած տառ: Ապա նշում են մյուս միավորները՝ 100, 150, 200, 300, 500, 750:

<<Սուպեր խաղում>> տառերը բացելու քանակը որոշում է խաղավարը: Թմբուկի կենտրոնում դրվում է հոլ , որին մարացված է ստվարաթղթի սլաքը:

Երեխաները իրենք են պատրաստում մրցանակները տեխնոլոգիայի ժամերին: Որպեսզի խաղն ավելի հետաքրքիր լինի, մասնակիցները նախապես համարներ են պատրաստում ելույթի համար:

Քանի որ հեքիաթները շատ պարզ, դյուրամատչելի ւո հաճելի էին երեխաների համար, ուստի նրանք ոչ միայն լսում կամ կարդում են դրանք սիրով ու հաճույքով, այլև երբեմն՝ վերընթերցում:

Հաշվի առնելով հեքիաթների հոգեհարազատ լինելը կրտսեր դպրոցականին՝ ներկայացնենք **<<Հրաշքների դաշտ>>** խաղի տարբերակը ժողովրդական հեքիաթների համապատկերում:

Խ ա ղ ա վ ա ր

- Երեխաներ, այսօր մեր խաղի թեման ժողովրդական հեքիաթներն են: Ձեզ տրվում է հետևյալ առաջադրանքները:

<u>Ի եռյակ</u>

- <<Դերձակը>> հեքիաթում ինչ է կոչվում այն իրը, որի տակ դերձակը թաքցնում է գողացած կտորները:

խ	ա	լ	ի	չ	ա

<u>/ / Եռյակ</u>

- Հայկական <<Վատից էլ վատը>> հեքիաթում վեզիրը ում շնորհիվ գտնում թագավորի տված հարցի պատասխանը: Ինչպես են կոչում այդ մարդուն:

չ	ո	բ	ա	ն

<u>/ / / Եռյակ</u>

- Ի՞նչ արհեստ ուներ երրորդ եղբայրը <<Երեք ախպեր>> հեքիաթում: Ի՞նչ են անվանում այդ արհեստով զբաղվողին:

ջ	ու	լ	հ	ա	կ

Եզրափակիչ փուլի առաջադրանքն է՝

- <<Աղքատ մարդն ու կինը>> հեքիաթում չխոսող մարդն ինչի խամանակ է ասում, որ խեր կլինի: Ասեք այդ բառը:

ս	ա	բ	ր

Սուպեր խաղի առաջադրանքը՝

- Ո՞ր հեքիաթում են եղբայրները դավաճանում փոքր եղբորը

ա	ն	մ	ա	հ	ա	կ	ա	ն

խ	ն	ձ	ո	ր	ը

Խաղ հանդիսատեսի (դասարանի) հետ:

1. <<Անկտրեկ վարունգը>> հեքիաթի մեջ ինչ է դառնում աղջիկը աղքատ պառավի տանը:

շ	ե	ր	ե	փ

2. <<Հայր և որդի>> հեքիաթում ինչի՞ մեջ է գցում հորը: Ինչպե՞ս է կոչվում այդ իրը:

ջ	վ	ա	լ

Ցանկալի է, որ այս հեքիաթները նախապես լավ ուսումնասիրված լինի ինքնուրույն ընթերցանության ժամերին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ինչպես օգտագործել <<Ինքնուրույն ընթերցանության նյութեր>> ժողովածուն

Տարրական դպրոցում մեծ է **ուսուցչի հեղինակությունը** աշակերտի մեջ ինքնուրույն ընթերցանության նկատմամբ **սեր արթնացնելու** գործում: Երկար տարիներ ուսուցիչը ինքն էր ընտրում տարբեր աղբյուրներից ընթերցվելիք նյութը և անցկացնում դասերը: Եվ **հրատապ խնդիր էր** դարձել ինքնուրույն ընթերցանության նոր ձեռնարկների ստեղծմանը շատ առանձին դասարանների:

Ուսուցչին և աշակերտին մեծ օգնություն եր այդ ձեռնարկների ստեղծումը՝ 1-ին դասարանում <<Գրական ունկնդրում և խոսք>>, 2-4-րդ դասարանների համար <<Ինքնուրույն ընթերցանության նյութեր>>:

Ինձ շատ դուր է եկել 2- րդ դասարանի ձեռնարկի ընթերցողին ուղղված **ուղերձը**.
<<Սիրելի բարեկամ, դու արդեն կարդալ ու գրել գիտես: Կարդացածիցդ շատ բան սովորելու համար պետք է սիրով ու ուշադիր կարդաս: Կհանդիպես տարբեր հերոսների, կիմանաս մրանց լավ ու վատ արարքների մասին: Կարդալով հեքիաթներն ու առակները, պատմություններն ու բանաստեղծությունները, առածներն ու ասացվածքները դու կիմանաս շատ ու շատ նոր բաներ:

Ընկերներիդ հետ ուրախ ու հետաքրքիր խաղեր ու մրցույթներ կարող ես կազմակերպել խաղիկների, հանելուկների, շուտասելուկների միջոցով: Օգտվել նաև <<Ճանաչիր կենդանիներին ու թռչուններին >> բաժնից, որը փոքրիկ հանրագիտարան է նրանց մասին:

Բնագրերը նախ պիտի **կարդաս և կատարես** <<Ինքնուրույն աշխատանք>> բաժնի առաջադրանքները, որ դասարանում ուսուցչի և ընկերներիդ օգնությամբ քննարկես <<Խմբային աշխատանքի>> հարցերը:

Անծանոթ բառերի իմաստը հասկանալու համար դիմիր՝ **<<Բառարան մարդուկին>>:**

<<Բանաստեղծությունների փունջ>> բաժնից քեզ դուր եկած նյութերը կարդա կամ արտասանիր ընտանիքիդ անդամների համար կամ տպավորություններդ արտահայտիր գույների միջոցով:

Ուրախ եմ, որ հանդիպեցինք: Համոզված եմ, որ լավ բարեկամներ կլինենք… <<Քեզ հաջողություն եմ մաղթում…>>>>:

Գիրքը նպատակ է հետապնդում կատարելու, գործելու, կարդալու և պատմելու տեխնիկական, միաժամանակ ձևավորել աշակերտների գեղագիտական ճաշակը, նրանց աշխարհըմբռնումը, ներկայացնել շրջապատի կենդանական ու բուսական աշխարչհի ճանաչման գործընթացը գեղարվեստական և գործնական բնույթի զանազան նյութերի միջոցով: Գրական տեքստերի ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքներով.

- **Երեխայի ընթերցողական հետաքրքրությունների հաշվառում**
- **Բնագրերի հասանելիություն**
- **Թեմաների և ժանրերի բազմազանություն**
- **Հեղինակների լայն ընդգրկում (հայ և համաշխարհային մանկագիրներ):**

Ընթերցանությունը պետք է կատարվի տանը, որ երեխան կարողանա կատարել <<Ինքնուրույն աշխատանքի>> համար նախատեսված առաջադրանքները՝ դեպքերը նկարագրող, հերոսների արարքներն ու հոգեբանական վիճակները գնահատող:

Նախատեսված է նաև ստեղծագրծական բնույթի հանձնարարականներ:

Թեմաների բազմազանության ու մատչելիության տարբեր աստիճանները հնարավորություն են տալիս անցկացնել **տարամակարդակ աշխատանքներ**՝ հաշվի առնելով երեխաների հետաքրքրությունները:

Մեծ դասականների գրական աշխարհ թափանցելով հնարավոր է միայն մանկական դասական ստեղծագործություններն ինքնուրույն կարդալու, հարցերի **սեփական պատասխանները գտնելու** միջոցով, կարող են **նկատել և ընկալել գեղեցիկը՝ դատապարտելով բացասական երևույթները**: Անգնահատելի է **հեքիաթների** դերը:

Հեքիաթների շնորհիվ երեխան ճանաչում է աշխարհը, գազափար կազմում բարու և չարի մասին: Հեքիաթն իր հերոսներով, ժողովրդական բառ ու բանով հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ:

Մեծ մանկավարժ Սուխոմլինսկին ասել է. <<Հեքիաթի դասավանդումը ամենաքնքուծ հպումն է երեխայի սրտին: Եվ այդ հպումից երեխան կթևավուրվի, հեքիաթների կախարդական աշխարհում կթրծվեն նրա միտքն ու հոգին, կնրբանան զգացունքները>>:

Իսկ Առածները, ասացվածքները, հանելուկներն ու խաղիկները մեծապես նպաստում են երեխաների լեզվի մշակմանը՝ որպես համառոտ, դիպուկ ու պատկերավոր խոսքի գեղեցիկ նմուշներ:

Օրինակ՝ ընկերասիրության, միասնության մասին տրված առած – ասացվածքներից.

- Ամեն թռչուն իր երեմով է ուժեղ:
- Ընկեր չունեցող մարդը անթև թռչուն է :
- Ինչքան որ խելոք լինես, ընկերոջդ հետ խորհրդակցիր:
- Ուրախություն լինի թե վիշտ, լավ ընկերը կողքիդ է միշտ
- Միայնակ ծառը քամուց կվախենա:
- Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես:

Գրավիչ են նաև ժողովրդական և հեղինակային հանելուկները, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում երեխաների մեջ՝ զարգացնելով դիտողականությունը, տրամաբանությունն ու պատկերավոր մտածողությունը:

Իսկ ինչպե՞ս են անցկացվում ինքնուրույն ընթերցանության դասերը: Այժմ ուսուցման մեջ մեծ տեղ է հատկացվում **սովորել սովորեցնելու մեթոդին**:

Ընթերցողի կարողությունները ձևավորվում են աստիճանաբար: Միաժամանակ դրանք բնութագրվում են իբրև աշակերտների՝ գեղարվեստական երկի բովանդակության մեջ խորամուխ լինելու ունակություններ և չեն կարող առանձնացվել խոսքային կարողություններից ու դիտարկվել անկախ: Բանն այն է, որ ներքին և արտաքին խոսքին անընդհատ ուղեկցվում է մտային բոլոր այն գործողություններով, որոնք վերաբերում են ընթերցողական կարողություններին:

Ակտիվ ընթերցանությունը դառնում է բնավորության գիծ: Մատչելի ընտրված գիրքը երեխայի մեջ նորանոր հետաքրքրություններ է առաջացնում և հարգալից վերաբերմունք ձևավորում գրքի ու ընթերցանության հանդեպ:

Հասնում ենք այն բանին, որ երեխաները աստիճանաբար հմտանում են ինքնուրույն կարդալու մեջ: Ինքնուրույն ընթերցանության համար հաճույք ուրախություն և հետաքրքրություն առաջացնող գրքերի ընտրությունը նույնպես շատ կարևոր է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախաշավիղ 2012 թ. թիվ 7
2. Նախաշավիղ 2010 թ. թիվ 8
3. Նախաշավիղ 2015 թ. թիվ 6
4. Նախաշավիղ 2006 թ. թիվ 5-6
5. Նախաշավիղ 2009 թ. թիվ 3-4
6. Նախաշավիղ 2010 թ. թիվ 3
7. Համացանց
8. Վերապատրաստման դասընթացի նյութեր